ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.01.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/01

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե
Մասնակից՝ «Ավագ-Շին» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Ավագ-Շին» ՍՊԸ-ի տնօրեն՝ Հ. Ավագյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/47» ծածկագրով գնանշման հարցում, ՀՀ Կառավարական տուն 3-րդ շենքի 4-րդ հարկի սանհանգույցների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 13.01.2020թ.-ի թիվ 26/26-1/207-2020 գրությամբ «Ավագ-Շին» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք

չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. <u>Գործի նախապատմությունը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 30.12.2019թ.-ի թիվ 02/16.4/8161-2019 գրության հիման վրա, 13.01.2020թ.-ին «Ավագ-Շին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 13.01.2020թ.-ին և նույն օրը կայացված որոշմամբ գործը ընդունվել է վարույթ և 16.01.2020թ.-ին նշանակվել է նիստ:

Գործի քննությունն ավարտվել է 16.01.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 27.01.2020թ.-ին:

ՀՀ կառավարության 23.01.2020թ.-ի թիվ 42-Ն որոշման համաձայն 2020 թվականի հունվարի 27-ի աշխատանքային օրը տեղափոխվել է 2020 թվականի փետրվարի 1-ին:

Հիմք ընդունելով վերոնշյալ որոշումը, Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 29.01.2020թ.-ին:

2. <u>ՀՀ քաղաքաշինության կոմիտեի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը</u>.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն 30.12.2019թ.-ի թիվ 02/16.4/8161-2019 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կարիքների համար 2019 թվականի հոկտեմբերի 29-ին գնումների պլանում ներառված 45461100/501 ԳՄԱ կոդով ՀՀ Կառավարական տուն 3 շենքի 4-րդ հարկի սանհանգույցների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման համար 2019 թվականի դեկտեմբերի 9-ին կազմակերպված «ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/47» ծածկագրով գնման ընթացակարգում առաջին տեղ զբաղեցնող է ճանաչվել «ԱՎԱԳ-ՇԻՆ»

սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, որին ծանուցվել է ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 48-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ Մասնակցի հայտը մերժվել է՝ որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանությունների մի մասը (ֆինանսական միջոցներ որակավորման չափանիշի մասով) չշտկելու հիմքով:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացրել են «Ավագ-Շին» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

3. <u>«Ավագ-Շին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 13.01.2020թ.-ին գրությամբ դիմել է «Ավագ-Շին» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 13.01.2020թ.-ի թիվ 26/26-1/207-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, 20.01.2020թ.-ին էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացված գրությամբ հայտնել է հետևյալը.

««ԱՎԱԳ-ՇԻՆ» ՍՊԸ-ն սկսել է իր գործունեությունը 18.06.2018-ից: Մասնակցել է մի շարք պետական գնումների մրցույթներին, որոնցից առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել ՀՀՊԿԱ-ԳՀԱՇՁԲ-19/9-2, ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/26-2, ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/26-1, ՉՀ-ԳՀԱՇՁԲ-19/5, ՆՀ1ՀԴ-ԳՀԱՇՁԲ-19/01, ԵՄՄ11ՀԴ-ԳՀ-19/02, ԵՄՄ11ՀԴ-ՄԱ-19/11, ԵՄՄ1ՀԴ-ՄԱ-19/12, 12ԴՊՐ-ՄԱԱՇՁԲ-2019/6, ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/98, ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/102-2, ԵՔ-ԳԿԱՇՁԲ-19/102-2, ԴՊՐ32-ԳՀԱՇՁԲ-2019/1, ՀՊԹ-ԳՀՍՇՁԲ-19/6, ՉՀ-ԳՀԱՇՁԲ-19/6, ՔՄԴ-ՄԱԱՇՁԲ-19/3, ՔՄԴ-ԳԿԱՇՁԲ-19/2 ծածկագրով մրցույթներում: Բոլոր աշխատանքները իրականցվել է պատշաճ որակով և սահմանված ժամկետներում. Որոշ աշխատանքների համար ստացել է շնորհակալագրեր կից ներկայացվում է բնօրինակ շնորհակալագրերի

արտապված օրինակը: Միշտ բավարարել է «Գնումների մասին» 21 օրենքով սահմանված նորմերին:

Սույն թվականի 09.12.2019 «ԱՎԱԳ-ՇԻՆ» ՍՊԸ-ն մասնակցել է Հայաստանի կանրապետության քաղաքաշինության կոմիտեի կողմից հայտարարված ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/47 ծածկագրով գնանշման հարցման մրցույթին:

Արձանագրություն N 2-ի համաձայն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից և օրենքով սահմանված ժամկետում պարտավորվել է ներկայացնել որակավորման փաստաթղթերը, որոնք պատշաճ ձևով ներկայացվել են:

Համաձայն 24.12.2019թ.-ի Արձանագրություն N 3-ի՝ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակցի հայտը մերժվել է՝ որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանությունների մի մասը չշտկելու հիմքով և նախաձեռնվել է «ԱՎԱԳ-ՇԻՆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգին:

«ԱՎԱԳ-ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվում է պարզաբանել ստեղծված իրավիճակը և հավաստել, որ միտումնավոր չի ներկայացրել իրականությանը չհամապատասխանող հայտարարություն:

ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/47 ծածկագրով գնանշման հարցման մրցույթի հրավերով պահանջվող N 1 մասնագիտական փորձառության որակավորման չափանիշները պահանջում է, որ մասնակիցը պետք է հայտը ներկայցնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացված լինի առնվազն 1 նմանատիպ պայմանագիր:

N 3 ֆինանսական միջոցներ չափանիշը՝ հայտը ներկայացնելու նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը չպետք է պակաս լինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից:

«ԱՎԱԳ-ՇԻՆ» ՍՊԸ-ի գնումների մասնակցի կողմից սխալմունք է տեղի ունեցել և ֆինանսական միջոցների որակավորման չափանիշի պահանջը հասկացվել է այնպես, որ համախառն եկամտի հանրագումարը պետք է ներառի հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող 3 տարիների համախառն եկամուտը:

«ԱՎԱԳ-ՇԻՆ» ՍՊԸ-ն ընդունում է, որ սխալ է թույլ տվել և իրավունք չուներ մասնակցելու ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/47 ծածկագրով ընթացակարգին, սակայն այդ սխալը միտումնավոր չի իրականացվել:

Քանի որ «ԱՎԱԳ-ՇԻՆ» ՍՊԸ-ն ունի անթերի աշխատանքային փորձ, միշտ պարտաճանաչ իրականացրել է բոլոր սպանձնված պայմանագրերը, բացառությամբ ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/47 ծածկագրով գնանշման մրցույթի ընթացակարգին:

Խնդրում եմ չներառել մեր կազմակերպությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:»:

«Ավագ-Շին» ՍՊԸ-ի տնօրենը ներկայանալով 16.01.2020թ.-ի նիստին, բանավոր կերպով հայտնել է, որ հայտը ներկայացնելու նախորդող տարիների ֆինանսական միջոցներ եզրույթը հասկացել է 2019թ.-ը ներառյալ, այսինքն հայտը ներկայացնելու պահից հաշված նախորդող տարիների համար:

4. <u>ՍՑ-LO-2020/01 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից ՀՀ Կառավարական տուն 3-րդ շենքի 4րդ հարկի սանհանգույցների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 29.11.2019թ.-ին հայտարարվել է «ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/47» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Ավագ-Շին» ՍՊԸ-ն:

Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/47» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Մասնակցի կողմից թիվ 2 հավելվածով ներկայացված գնային առաջարկով որպես պայմանագրի կատարման համար նախատեսված ընդհանուր գումար նշվել է 13 676 400 ՀՀ դրամ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 12.12.2019թ.-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է կասեցնել նիստը և ծանուցել հրավերի պահանջներին բավարար գնահատված բոլոր մասնակիցներին առաջարկված գների նվազեցման նպատակով կայանալիք բանակցությունների մասին:

Բանակցությունների արդյուքնում «Ավագ Շին» ՍՊԸ-ն ներկայացրել է 13 674 000 ՀՀ դրամ գնային առաջարկ և ճանաչվել 1-ին տեղ զբաղեցնող մասնակից:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է 12.12.2019թ.-ին հարցում ներկայացնել ՀՀ պետական եկամուտների կոմիտե հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 16.12.2019թ.-ի տրված տեղեկատվության համաձայն՝ Մասնակիցը հայտը ներկայացնելու տարվան նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտի հանրագումարը 0 ՀՀ դրամ է:

Հանձնաժողովի 24.12.2019թ.-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Կոմիտեի կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն՝ Մասնակցի հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է սույն ընթացակարգի շրջանակում Մասնակցի ներկայացրած գնային առաջարկից («ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշ):

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է ծանուցել Մասնակցին (կցելով Կոմիտեից ստացված տեղեկատվությունը) և առաջարկել երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները, սակայն սահմանված ժամկետում Մասնակցի կողմից, բացառությամբ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի, արձանագրված մյուս անհամապատասխանությունները շտկվել են:

«Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով Մասնակցի կողմից ներկայացվել է Կոմիտեից ստացված գրության պատճենը, համաձայն որի՝ Կոմիտեի

էլեկտրոնային կառավարման համակարգում առկա տվյալների և Մասնակցի կողմից ներկայացված հաշվարկ-հաշվետվությունների 01.01.2019թ.-30.11.2019թ. համար գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառություն է հայտարարագրվել 19.820.602 (տասնինը միլիոն ութ հարյուր քսան հազար վեց հարյուր երկու) ՀՀ դրամ:

Հաշվի առնելով, որ Մասնակցի կողմից վերը նշված որակավորման չափանիշի մասով արձանագրված անհամապատասխանության վերաբերյալ հրավերի պահանջներին բավարարող փաստաթուղթ չի ներկայացվել, Հանձնաժողովը որոշել է «Ավագ-Շին» ՍՊԸ-ի հայտը մերժել և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ ներկայացնել հաջորդաբար տեղը զբաղեցրած մասնակցին՝ «Արտշին-1» ՍՊԸ-ին:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 13.01.2020թ.-ի թիվ 26/26-1/207-2020 գրությամբ «Ավագ-Շին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝ ֆինանսական միջոցներ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց

պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում տեղեկատվություն չտրամադրվելու դեպքում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող:

Կարգի 46-րդ կետի համաձայն՝ սույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է սույն կարգի 32-րդ կետի 22-րդ ենթակետով սահմանված ժամկետներում: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթեր չներկայացվելու կամ ամբողջական չներկայացվելու կամ ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ներառյալ կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում, եթե անհամապատասխանությունն

արձանագրվել է կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում, ապա սույն կետում նշված ծանուցմանը կցվում է նաև այդ տեղեկատվությունը պարունակող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից: Եթե կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունը վերաբերում է՝

ա. հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցած ժամկետանց հարկային պարտավորություններին, ապա անհամապատասխանությունը համարվում է շտկված, եթե մասնակիցը ներկայացնում է կոմիտեի տրամադրած տեղեկատվության մեջ նշված գումարի վճարումը հիմնավորող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) օրինակը,

բ. «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին, ապա արձանագրված անհամապատասխանությունը կարող է շտկվել ինչպես առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացվելու, այնպես էլ՝ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 63-րդ կետի համաձայն՝ Մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտով ներկայացնի հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից,

2) եթե մասնակիցը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կամ գնման առարկայի նախահաշվային գինը տվյալ գնման ընթացակարգի շրջանակում չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը՝ բացառությամբ մասնագիտական վերապատրաստման, աուդիտորական կամ խորհրդատվական ծառայությունների, շինարարական ծրագրերի՝ ներառյալ դրանց իրականացման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի մշակման, փորձաքննության և տեխնիկական հսկողության ծառայությունների գնումների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության գործող ստանդարտներով կամ նորմատիվ-տեխնիկական պահանջներով սահմանված դեպքերի կամ գնման առարկա է հանդիսանում անշարժ գույքի ձեռքբերումը կամ մասնակիցն անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ է կամ գնման ընթացակարգը կազմակերպվում է սույն կարգի 23-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված հիմքով, ապա սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված պահանջը չի սահմանվում հրավերով և մասնակիցը հայտով ներկայացնում է միայն հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության մասին,

3) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

Վերոնշյալ իրավակարգավորումների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

Հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով կոմիտե հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման

չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Հայտը գնահատվում է բավարար, եթե ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները:

Այն դեպքում, երբ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթեր չներկայացվելու կամ ամբողջական չներկայացվելու կամ ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ներառյալ կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում, եթե անհամապատասխանությունն արձանագրվել է կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում, ապա սույն կետում նշված ծանուցմանը կցվում է նաև այդ տեղեկատվությունը պարունակող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից: Եթե կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունը վերաբերում է՝

ա. հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցած ժամկետանց հարկային պարտավորություններին, ապա անհամապատասխանությունը համարվում է շտկված, եթե մասնակիցը ներկայացնում է կոմիտեի տրամադրած

տեղեկատվության մեջ նշված գումարի վճարումը հիմնավորող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) օրինակը,

բ. «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին, ապա արձանագրված անհամապատասխանությունը կարող է շտկվել ինչպես առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացվելու, այնպես էլ՝ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ՀՀ Կառավարական տուն 3-րդ շենքի 4-րդ հարկի սանհանգույցների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 29.11.2019թ.-ին հայտարարված «ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/47» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Ավագ-Շին» ՍՊԸ-ն ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից:

Հանձնաժողովը որոշել է 12.12.2019թ.-ին հարցում ներկայացնել ՀՀ պետական եկամուտների կոմիտե հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 16.12.2019թ.-ի տրված տեղեկատվության համաձայն՝ Մասնակիցը հայտը ներկայացնելու տարվան նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտի հանրագումարը 0 ՀՀ դրամ է:

Կոմիտեի կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն՝ Մասնակցի հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է ընթացակարգի շրջանակում Մասնակցի ներկայացրած գնային առաջարկից («ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշ):

Վերոնշյալով պայմանավորված՝ Հանձնաժողովը որոշել է ծանուցվել Մասնակցին (կցելով Կոմիտեից ստացված տեղեկատվությունը) և առաջարկել երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Սակայն Մասնակցի կողմից սահմանված ժամկետում «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով ներկայացվել է Կոմիտեից ստացված գրության պատճենը, համաձայն որի Կոմիտեի էլեկտրոնային կառավարման համակարգում առկա տվյալների և Մասնակցի կողմից ներկայացված հաշվարկ-հաշվետվությունների 01.01.2019թ.-30.11.2019թ. համար գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառություն է հայտարարագրվել 19.820.602 (տասնինը միլիոն ութ հարյուր քսան հազար վեց հարյուր երկու) ՀՀ դրամ:

Հաշվի առնելով, որ Մասնակցի կողմից վերը նշված որակավորման չափանիշի մասով արձանագրված անհամապատասխանության վերաբերյալ հրավերի պահանջներին բավարարող փաստաթուղթ չի ներկայացվել, Հանձնաժողովը որոշել է «Ավագ-Շին» ՍՊԸ-ի հայտը մերժել:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է մասնակցության իրավունքի, որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, ինչպես նաև առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին հայտարարություն (այսուհետ՝ Հայտարարություն): Եվ եթե Հայտարարությունը որակվի որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնի հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա

այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցն պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը՝ ներկայացնելով որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի համապատասխանության մասին իրականությանը չհամապատասխանող հայտարարություն, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Ավագ-Շին» ՍՊԸ-ն, Պատվիրատուի կողմից սահմանված շտկման ժամանակահատվածում, չներկայացնելով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին իր համապատասխանության մասին վկայող փաստ՝ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 13.01.2020թ.-ի թիվ 26/26-1/207-2020 գրությամբ «Ավագ-Շին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/01 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Ավագ-Շին» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ